

“Droschak”

ORGANE  
de la Fédération  
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse :

Rédaction du “Droschak”  
GENÈVE (Suisse)

## “ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

### ԳՐԻԳՈՐ ԳԼԵՏՃԵԱՆ

Վ. խ. 9 օգ. (ն. տ.) 1898

Բացգրի՛ր մը կը պուժէ մեզ Աթէնքէն, թէ տեղական հիւանդանոցին մէջ օգոստոս 9-ին վախճաներ է մեր այդ սիրելի ու յարգելի ընկերը:

Գրիգոր Գլըտճեան հայ յեղափոխութեան հին գործիչներէն մէկն է, մէկը 1890-ի Պօլսի շարժումին այն լուսաւոր դէմքերէն, որ տանջանքներու և երկարամեայ բերդարգելութեան շնորհիւ խորտակած, ցաւահոծ մարմնի մը մէջ անաղարտ պահած էր իր սիրտն ու միտքը:

Յարգանք իր յիշատակին:

### ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԶՕՐԱՎԻԳԻՐ

Պատմութեան ընթացքում հազադէպ են վայրկեաններ, երբ մի ստրուկ ազգութեան յեղափոխական շարժման կրող է հանդիսանում ազգի ամբողջ ընդհանրութիւնը. շարժման ծանրութիւնը ընկնում է սովորաբար որոշ տարրի վրայ, չենք սխալի, եթէ ասենք՝ երիտասարդ սերնդի վրայ: Առաջաւոր ազգերի պատմութիւնը ընդհանուր առմամբ նոյն փաստն է վերկայում մեզ: Հին սերունդը ընդհանրապէս կատարել է միշտ և ամէն տեղ կրաւորական, յաճախ ուղղակի թշնամական դեր նոր հասանքների դիմաց:

Օսմ. Հայաստանում ներկայ պայմանների բարձուով ամէն մի հայ շահագրգռւած է. հին թէնոր սերունդ, բոլորն էլ հաւասարապէս տենչում են թութափել արդի մարդասպան ուժեղի. գիւղացի, արհեստաւոր, վաճառական, հոգեւորական և այլն, նոյնիսկ վաշխառուն — ոչ մէկը այդ տարրերից ապահով չի զգում իրեն, և բոլորի շահերն էլ, գոնէ թէօրիպէս, ներդաշնակում են տիրող ուժեղի ոչնչացման մտքի հետ: Այնուամենայնիւ մեր յեղափոխական շարժման գործօն մասնակցողները համեմատաբար փոքրիկ բաժին են կազմում և դա էլ գրեթէ երիտասարդութիւնն է միայն. երիտասարդութիւնը՝ թարմ, սպաւորուող, ըմբոստ ու հալածական, հայ աշխատաւոր ընդհանրութեան ծնունդ երիտասարդութիւնը:

Հին սերնդի վրայ բացի սուլթանի բռնակալութիւնից ծանրացած է և սովորութեան բռնակալութիւնը: Երկարատե սովորութիւնը ըմբոստ է նորամուտ ձգ-

տումների ու հոսանքների դէմ: որքան մարդս աւելի է ապրում որոշ ազդեցութիւնների տակ, նոյնքան աւելի դժուար է լինում նրան ազատել այդ ազդեցութիւնների բռնութիւնից, առաւել ևս՝ հակառակ դիրք բռնել նրանց: Հայ գիւղացին, հին սերնդի գիւղացին, երկար տարիների ընթացքում անգէն, միշտ հլու հնազանդ ամենայնտին զապտիէի առաջ՝ չէր կարող յանկարծակի յեղաշրջել իր մտածմունքներով, իր աշխարհայեցողութեամբ: Այլ է նոր սերունդը: Մատաղ հասակից ենթակայ խորթ միջավայրի հարւածներին, միշտ ականատես սուլթանական ոստիկանների հալածանքներին, որոնք ամէն տեղ իրեն են փնտռում — երիտասարդական հրաբորբոք սրտի մէջ վաղաժամ զարգանում է սրբազան ատելութիւնը, որ գերագոյն նախանշանն է յեղափոխական գաղափարի, և իր իդէալական սրտի բոլոր խանգով շտապում է նա փարել ապստամբական դրօշակին, իբրև Ֆէդայի, տէնօրիստ, դժոխային վերեփնդրութեամբ շեցուն մի դաւադիր: Եւ մենք տեսնում ենք յիրաւի, որ 80-ական թւականների վերջերում հայ յեղափոխութեան անդրանիկ քայլերը երիտասարդներով եղան, և մարտիրոսութեան առաջին խարոյկները նրանց համար բարձրացան:

Այնուհետև, շնորհիւ աճող թշուառութեան — թըշուառութիւնը, որ ինքնին յեղափոխիչ է, — շնորհիւ, միւս կողմից, յեղափոխական պրօպագանդին՝ սուարացան հետզհետէ անձնւէրների շարքերը: Ինտելիգենտ երիտասարդների հետ միասին արեան դաշտ եկան մարտիրոս ժողովրդի անուս, բայց ոգևորութեան ընդունակ հանրային ցաւերով ու ազատասիրական տենչերով ապրող զաւակները: Գօլօշեանների, Զաքարեանների, Պե-

մը կընէ հէպ իր պատկանական երկիրը, վէտաներու լուսակու Ասիան, որ գործելէ աւելի հայեցող եղաւ եւ որ կամքի ու հոգիի անճնասպանութիւնը քարոզեց:

Ասիան՝ աստուածայեանական բունին վրայ, մարդկային պատուատի կարօտը կըզգայ, թէկուզ մահացու ըլլայ իրեն համար: Արեւելեան ու ծայրագոյն արեւելքի հարցերը երկնային լեռներու վրայէն միութեան գծով մը կը պատկեն իրարու հետ, աւելի լայն տարած մը, կամ թերեւս ամբողջ Ասիան ընդգրկելով: Ասիոյ մասնաձեւը երթալով կը պծուի, կազմելով հանգոյցներ, զոր քակելու համար քանի մը Ալեքսանդրներու սուրբ հարկաւոր է: Առայժմ քամին թեւթեւ կը թոցնէ փտորուկ Ասիան, մինչեւ որ գորաւորագոյնները առիւծի պատառը խելու սրտտուութիւնը զգան իրենց մէջ: Արեւը տժգոյն ցոլումներ կը սրսկէ այդ քնթաթախ աշխարհին վրայ, ուր կայշիկայ կեանք մը իուր ժամանակի մէջէն թափառիկ ամպի պէս կանցնի, քնութեան ուժերուն կրաւորական զգայութիւնը միայն կրելով, ուր գետներուն ալիքները միշտ նոյն յաւիտենական շաւղտուկ ունին, ուր քնութիւնը իր կուսութիւնը կուլայ...

Մասնաւորապէս երեք մեծ պետութիւններ Ազգիա, Ռուսիա եւ Գերմանիա, զանազան կողմերէ կը դիմեն նախկին պէտի մը. բայց դժբախտաբար այն կէտը ուր պետի ժամանորն աշխարհի հաւասարակշիռ ծանրութեան կեդրոնը պետի ըլլայ, որուն վրայ այլեւս մարդկութիւնը գլխու պտոյտ չպիտի ունենար:

Իրաւ է վառողի հոտ չիկայ. պատերազմը կը կատարի մունջ կերպով: Տէրութիւնները աշխարհագրական սահմաններէն անդին գիտակարան սահմաններ կը փնտռեն, որոնք արտօն, քանի կը մտնեն, հորհոզի պէս ետեւ կերթան:

Նոյն հսկ Ասիական վիթխարի լեռները չեն կրնար կասեցնել անհատ շահերու սպառազէն յառաջնութեանը:

Մասնաւոր մասնաւոր սուրի ծակաւորութիւնը առջեւ կը քալէ: Կառավարութիւնները իրենց սուրբը մերկացնելէ առաջ, քանկին բացած կը շլացնեն ծոյլ Ասիան: Ազգիա, Ռուսիա Սիւրիոյ արեւելէն դէպի Ասիոյ ներսերը երկաթուղի շինելու մեղաշորհը կուզեն սուլթանէն. Գերմանիա երկրաշտփական քայլերով Աստուծոյ կարգաւէ դէպի Պաղատա. իսկ հիւսիսէն Ռուսիա իր երկաթուղիի գծերը կը հրէ վար, նիզակի պէս Արեւմտեանի, Աֆղանիստանի ու Պարսկաստանի փորը խրելով. եւ թերեւս Հնդկաստանի ալ ուր հնդիկ աստուածներուն փառփառ աչքերը կուզէ փորել...

Մրցումը անդ է: Գերմանիա խնդ խոտի պէս կամօ, պարպելու տեղ կը փնտռէ: Ռուսիա ինքզինք Ասիոյ ընական տանուտէրը կը սեպէ: Նուայի արեւելէն, ծերմակ ցարերը կը տննչան իրենց մէկ ոտը Քէրքոքավոյքի: Անդանիս կափարչին վրայ կոխել, միտով Ասիոյ սրտին վրայ. երբ արեւը շատ շող ընէ, Սիւրիոյ սանամանիքը կայ զայն պտղաբերութեամբ, կամ քնուրջ... զայն քնացնելու համար:

Ազգիա, որ իր ստամոքսին հետ ծնունդաբար մ'ալ ունի, գրահաւորներուն վրայ հեծած — թէեւ լեռներ մազկեղու համար նոյի տապալին քաշութիւնը չունին — Ասիոյ եզերքները կը սլքոտայ, իր նաւերուն ծուրի ծամերն ըլլալով Մեծի Բրիտանիոյ առիւծին քաշերը: Մարդու աչք թարթելու չի թողոր. ծիսափողը բերնին, ձեռքը գրպաւը դրած — անշուշտ երկանկոր դգալ մ'ալ հետը առած — Արշախիդագոսէն մինչեւ Գօթէա ժուռ կուգայ հարհառ պուլտոկի մը պէս որ խածած տողը կը փոցնէ: Թնդանութիւնը գուռուկը Ասիոյ սարերը ու ձորերը չի թնդացուցած, թերեւս երկաթուղիները անապատները, լեռները ու ծմակները թրատեն, իրենց թաւալումներուն տակ թնթրկելով միլիոնաւոր ժողովուրդներու խոտ կեանքը ու դարերու աղտին մէջ թաղած միտիկական Ասիոյ հոգին...

Արիական թոռները ետ կը դառնան Ասիա իրենց պատու մամին ծիւն մագերը փեթոկելու համար...

\* \*

Քաղաքակրթութեան հեղեղը ու մղեղը պիտի աւել Ասիան եւ գուցէ հանրամ թիւրքիստան ալ զոր այս պահուս խնդի մէջ դրած կը հարնն անոր սերը քամելու համար: Սուլթան չամիտ արեւելով կը փոխարինէ այդ սերը, չամիտ, զոր շատեր մեծ քաղաքագէտ կարծեցին, — այս դարուս քաղաքագէտ ըլլալու համար շատ մարդ շարժելու է — չորս բողբը կը տեսնէ որ պետութիւնները շանամուկի պէս բերանին լայն մը քացած կը շանան հար ընել իր դիակ մարմինը: Կը տեսնէ թէ ինչպէս թիւրքիոյ ամբողջութիւնը պահած, բայց երկրին բոլոր կենսականութիւնը, երակները օտարին ձեռքը կանցնին. օտար ծագեր հարօրացած իր այգիին մէջ կը պտղոտեն օսմանեան ողկոյզը շուտնը ձգելով երկրին հարգաւոր ժողովուրդին: Գերմանական գաղութականութիւնը կողողէ Փոքր-Ասիան — իր հետ տանելով քաղաքակիրթ բայց օտարաւոյն քաղա-

քականութիւն մը — որուն դէմ, դուսական դեղին օրկանը «նօսօյէ Վրէմիա» որ չայաստանի արեւան շրջմաներուն դիմաց իր շրթունքները կը լաւտէր, դիւանարի պէս վայնասուն կը քարծրացնէ եւ կը հրաւիրէ Փրանսսան իրենց բոլոր ուժով դէմ դնել թիւրքիոյ, Գերմանիոյ եւ Վասիկանի ծածուկ համաձայնութեան, որ երկու երկիրներու շահերուն ալ կապաւնայ:

Սուլթան չամիտ գլորեց երկիրը իր ես-ը փրկելու համար: Բոնապարտական երկիր մը լաւ է, կըսէր Սուլթ, բայց եւ չունի. եւ իսկապէս թիւրքիստան ուրիշ կը չգտաւ, այլ ինքզինքը քշիկքշիկ ծախելով: Այսօր թիւրքիստան բոլորովին անաւանական երկիր մըն է, օտարին շահերն են որ երկրին ուղղութիւնը կը լծեն: Զօրաւոր շահերու ընդհարուր տաճկական խարխուլ հողին վրայ, ներքին անկերպարան եւ յոռետես դրութիւնը, ուրիշ բան չեն ներշնչեր քաջարի օսմանցիներուն, բայց եթէ անմոռներու շարք...

Ձէ կարելի ըսել թէ էգանը ետիքսին զոր միւլզգանը կ'եղեքերգէ մոնտոլ օրան վրայ լաց մըն է:

Եթէ կուզէք օսմանեան մահիկին տեղ հարցանիշ մը դրէք:

\* \*

Արաքիան արիւց կերթայ. Օսմ. խալիֆայութիւնն ալ շուրջ կիմայ: Արաքական ապստամբութիւնը գաւառ ըլլալու լուրը սուտ ելաւ. քանի որ թրքական աղբիւրէ կը բխէր:

Ապստամբութեան կեդրոնը Եէմէնի նահանգն է, երջանիկ Արաքիոյ հարաւային մասը ուրիշ քշիկ մը վար Ատէնը կայանակիական առիւծի թաթի հետք մը, որուն համար կը պատմեն թէ երբ անգլիացիք շատ մը տարիներ առաջ գրաւեցին զայն, թիւրքերու վէզիրը չէր գիտէր իր երկրին մէջ Ատէն քաղքի մը գոյութիւնը: Ապստամբութիւնը ոչ միայն չի հանդարտի այլ աւելի հեռուն կը նետէ բողբը, այնպէս որ թիւրք իշխանութիւնները շշմեր մնացեր են: Սուլթ, հեղինակը կը համարի այս նոր ապստամբութեան: Բայց անձամբ չէ նաեւ արաքներուն հակակրանքը դէպի Օսմ. Պետութիւնը: Կրօնը շատ քիչ կը լծակցի արաքական գաղութներուն. թէեւ Երուզակ քանթէօնի դպրիներու լեզունին չի կենար դայալայլէ, թէ իսլամութիւնը ազգութիւն չի ծանշար. ուրիշ կը ծնէր համալսարաններու հզօր երազը, որ լեցուն է յուսախարութեան նաւաբեկութիւններով:

Ապստամբ շէյխերը սովածներուն պաշար քաշելով, հստգհետէ իրենց կողմը կը գրաւեն զանոնք. թիւրք իշխանութիւններն ալ նոյնը կը փորձեն ընել, արաք ժողովուրդին անսիրելութիւնը ամոքելու համար:

Անգլիական մամուլը ուշիուշով կը հետեւի ապստամբական շարժման եւ կըսի թէ Ազգիա աչքը չիւած է այդ արեւելաշ երկիրը իր հովանաւորութեան տակ մոցնելու համար: Սուլթանի այնքան զոհարեցութիւնով ու երկրպագութիւնով փայտայած համալսարաններու երազ օրերը կը փփկին Օսմ. Պետութեան փրփուր փառքին պէս որուն գլուխը Կարաթի լեռներուն վրայ կը հանգչէր ու ոտքերը անապատներու մէջ կը տապալակէին:

«Սիւրբէյի հիւսկուն»-ը պիտի փոխէ այլեւս իր ծամբան, եւ միւլզգանը, փոխանակ Գրպլէի, պիտի էգանէ դէպի Երբէ կամ Պէրլին, ուր Օտիսը աւելի գօրաւոր է քան լալալը...

Եէմէնէն հասած վերջին լուրերը կացութիւնը շատ ծանր կը ներկայացնեն: Արաքները դաւար չեն տար թիւրքերուն: Կառավարութիւնը անագին թլուվ զօրը կը խրէ: Մայիսէն իվեր 10,300 հոգի խրկած է արդէն Եէմէն: Կերեւի թիւրքերը չեն ուսումնասիրեր այդ երկնուէ ժողովուրդը որուն աչքին ճերմկուցը միայն կզգացնէ մեզի անոնց ներքին կրակը:

\* \*

Կրէտէի կարգադրութիւնը համը հոտը փախցուց: Դիւանագիտութիւնը անփոյթ ծիգեր կընէ այդ անլուծելի լուծելու համար. իսկ սուլթանը, կատակի ծնուվ, իր սրբազան իրաւունքներուն վրայ կը պնդէ, մուկատուի պէս իր խալիֆայական հոշակին ետեւէն մլաւելով: Դիւանագէտներու ապիկարութիւնը, քանաւոր կամ ոչ, մինչեւ օրս խալիֆային թեթեւ ոգևորութիւն մը ներշնչած էր. բայց այդ ոգևորութեան փետուրները թափեցան երբ վերջերս հիններուն տեղ նոր գիւնորներ խրկելով Կրէտէ, ծովակալները արգիւցցին զանոնք ցամաք ելլելու: Սուլթանը այդքան դիմադրութիւն չէր սպասէր եւրօպական այնքան համալսարան քաղաքականութենէ մը:

Չորս պետութիւններ — երկուքը, Աստորիա եւ Գերմանիա, իրենց շուրթակը շալկած կծկած ըլլալով արդէն — ժամանակաւոր կառավարութեան մը համար Կրէտէի նոր կանոնադրութիւն մը մշակեցին որուն դէմ սուլթանը պիտի մը բողբեց:

Վերջի պահուն սուլթանը հեղեղակով, դիմեց Գերմանիոյ կայսեր, որ իր միջնորդութիւնով ազատէ գիւրը իր անել զրութեանէ: Քայգէրը հանգուշն բայց երեսանի կերպով մը յորդու-

ընց սուլթանը որ չորս տէրութեանց խօսքը մտէ, հնարկն պնդելով իր իրաւունքներուն վրայ: Այս վերջին խօսքը Արեւելի թելին խառնու է նորէն...

Կրէտէի հարցը արեւելեան փշուտ մացառուին մէկ հիւսն է, որու քեցումը այնքան հեշտ չընկեր առանց ամբողջութեանը մէջ խորթութիւն մը առաջ բերելու: Արեւելեան խնդիրը տեսակէտներով կը դիտուի. ահա ինչն համար է որ Կրէտէի շուրթուն մէջ ծովակալները ալիքներու պէս կը շարժին բայց... չնն քալեր:

\* \* \*

Ֆրանսիա. — Հանթօթն շուշան Փրանսայի փերթերը աղոտտեց, գոր մարքիլու համար պէտք է քեղթեւ կայն: Փրանսայի նախկին արտաքին նախարարը՝ որ իրաւամբ փաշա յոր-ընթուսին արժանացաւ, կը խալկնար սուլթանին հետ փոխանակ տրոջ կերպով Փրանսայի արեւելեան շահերու գազանակը սղմելու: Արեւելի մէջ Փրանսական ազդեցութիւնը պատմութեան մէջ մարջ մտնելու վրայ է կամ մտաւ... Սուլթանի 30,000 ոսկին իսկու քրաւ հանթօթն. որ թեթեւ սրտով մը ծախեց երկիրը, կրանն թէ Յուդան ալ 30 արծաթի վաճառեց իր տէրը: Տեսանք թէ ինչպէս խորհրդարանին հարցապնդումներու կարկուտին առջեւէն, իմաստակորէն եւ այլանդակորէն կը փախսին ընդհանուր եւրոպական կարմիր վտանգը մատնանիշ ընելով Փրանսայի: Բարեմիտ սուլթանը զբաղը կը խնդար, Փրանսական նախարարին վրայ որ մանկաւիկի մը պէս իր հրամանները կը գործադրէր: Այն ոսկին ալ անուշ լեզուի պէս, օժը ծաղէն դուրս հանելու հմայքը ունի:

Փրանսայի նոր նախարարը, որ աւելի Փրանսացի կը նըկատեն քան պ. Հանթօթն, Թիւրքիոյ շարժերուն ատեն Փրանսական հաւատակներուն կրած վնասին տուգանքը կը պահանջէ. սաւառնարով յունական պատերազմատուգանքէն բռնի վար դնել Բարիկի Օսմ: Պանքայէն: Իրան պատասխանը գայրտու ու մեր-ժողական եղած է, առարկելով որ իսլամներն ալ շատ կորուստ տուած են, յետոյ մաղծոտ առողջանութիւնով մը կաւեցնէ որ օտարները իրենց տուգանքը պահանջելու համար խողովութեանց հեղինակներուն դիմելու են, այսինքն, լոնկայն կը հասկցնէ, հայերուն: Բայց Իրան պատասխանէն կը հետեւցի նաեւ թէ, սուլթանը ժամանակին պ. Հանթօթին վարվաստակը վճարած ըլլալուն տուգանքի խնդիրը ալ չուրը կիցնայ:

Ենթադրենք որ Պապը Ալին հայերու մասին ատանկ շարածի յղացում մը ունեցած ըլլայ ու տուգանքի բեռը հայութեան շաւակը նետէ: Օսմ. Պետութեան արմատութեան հաւատարմը մը պիտի ըլլար այդ քայլը, որ ժողովուրդը կառավարելու վերէն վարէն չի հասկնար: Եթէ պաշտպանութիւնը տրամաբանութիւնով այ ազգին շարժումը կը գատէ շքապատող պայմաններէն եւ չտեսնում կընէ երկրին քայքայ ու անիշխան վիճակը, որ անխուսափելի քրաւ յեղափոխութեան պտղակուտը, կը ցցնէ թէ դազիներոյ երկիրը դեռ իմաստասիրող ու կշիռ ունեցող մտքէ զուրկ է: Իսլամութիւնն ալ փիլիսոփայութեան շոշորթը չի պարունակէր, գոնէ այսպէս կը դաւանէր Պիլիմոֆ, քացի հիւրի-ներու քնազանցական աշխարհէն. քնական էր այդքան ցամաքութիւնը չորզուի հա ֆազ-ներ միայն պիտի բացէր, որոնց համար Մօլթթէ կըսէր, Թիւրքիոյ միակ գիտուններն են:

Արեւնեղութիւնը տեղի կունենայ եւ Իրոնը երդումպատու կըլլայ որ թիւրք ժողովուրդը տգէտ է, անուղղայ եւ մուլտանը: Ժամանակ մը Երուզը իր շքեղութեան ֆէրածէն քրաւ այդ փաստը, գոր կերելի մոռցեր է:

Թիւրքիոյ միակ փիլիսոփայ ու քանաստեղծ միտքը նազըմն էր. գոնէ ժամանակով Պօլսի մէջ կարգ մը մարդիկ այսպէս կը փսփային:

Օսմ. ոճրագործ պետականները, իզգէթներ կամ Եգիպտոս, կերելի կեանքի գնահատման մէջ շատ թոյլ են, վոսփորի կանտոններու մթնոլորտին պէս ուր ժողովուրդներու կեանքի ու մահու հարցը կը վճուի: Զէ որ «ամենողորմած ալլահը» Մալիմաթի հաշերը ու աղերսները լսելով, վար կիշնէ — էլաօրաքին վրայ հեծած անշուշտ — ու Ալ Օսման կառավարութեան թըշ-նամները կը գարնէ, ինչպէս... Կլատուծը:

Ենիկ աստղին գօլ ժամանակն է. ձգնք որ Ղոսփորի սերունդերի հովերը զովցեն սուլթանի հրաշէկ գլուխը ու օսմաններ թղթախտաւոր... հովրտած մամուլը:

Երբ տուն մը աւել չի մտնեք մամուլները իրենց ոտայնը կը հինն...

Գ Ի Ս Մ Ա Ր Բ

Գրկթէ 30 տարի երկաթի նախարարը ֆալախան

ձեռքը նստեցաւ Եւրոպայի անարին վերեւ. ճշմարիտ հին վարժապետ մը: Իր անունը համաշխարհային բնաւորութիւն ստացաւ: Եղան պատրանքի ժամեր երբ կարծեցաւ թէ հողագունը ոչ թէ իր առանցքին վրայ կը թաւալէր որքան Պիսմարքի մատնեղուն վրայ: Մի-ջազգային քաղաքականութիւն եւ Պիսմարք իրար կը պայմանաւորէին: Հոն ուր քաղաքականութեան օրա-րեւը չէր պանդխտած, այդ մթաստեւեր անունը մէտէօ-րի մը պէս եկած ինկած էր: Գաւառական ներսերը օր մը երկու գիւղացի միամիտ միամիտ իրարու հետ կը խօսէին Եւրոպայի վրայ, թէ եւ իրենց նայաւձքը զի-րենք չըջապատող կոյս հորիզօնէն անդին չէր կրնար անցնիլ. «Իրտե՛ս, կըսէր մէկը անգիտակից ու վար-մայական եղանակով մը. Պիսմարք մը կայ կըսեն, ա-նանկ խեղացի է որ հարիւր տարի ետքը գալիքը կի-մանայ»:

Առասպելներու մէջ սփածուած, այդ աշխարհազորոյ-մարդն էր որ փչեց հողին յուլիս 30-ին, իրմէն առողջ արդէն բիւրաւորներ հողին յանձնած ըլլալով: Թի մը հող, կանգուն մը պատանք ծրարեցին այդ վիթ-խարին որ երբեմն աշխարհս կը լեցնէր... Ո՛վ գերեզ-ման, որքան պիտի օրհնէր մարդկութիւնը քեզ, եթէ աւելի կանուխ բացուած ըլլայիր:

Պիսմարք ոտքին փոշիները թօթեց այս աշխարհիս վրայէն, անեղծ ու ճանթեւած գիակ մը ձգելով մարդ-կութեան գոր երբեք չսիրեց: «Ինծի վերապահուած մի-ակ երջանիկ օրը այն օրն է, ըսած է, ուր ալ չպիտի արթննամ»: Կարելի չէ՞ ըսել թէ այդ օրը մարդկայ-ին աչքը սիր օրն էր: Թերեւս բարեմիտ յիշաչարու-թիւնով մը ըսողներ ըլլան՝ երթալն ըլլայ գալը չըլլայ:

Ուրեմն, ապրող սերունդը իրաւունք ունի մինչեւ գերեզմանին ափը — անկէ անդին երթայ բարով — ընել այն անողոք եւ անաչառ դատաստանը, հասակով, որ-քան սրտով ու մտքով մեծ հակային նկատմամբ, որ երբեք խզմտանք չունեցաւ իր գոյութեան մէջ եւ որ երբեմն ազգերու ճակատագիրը ձեռնեց (manier) մո-լեգին սրբապղծութիւնով մը:

Քաղաքականութիւնը միշտ խորթ մայր մը եղած է ազգերու գոյութեան. կեղծարար կամ խարդախող բնու-թեան օրէնքներուն. Գիտութեան հետվրայ չի քալեր, այլ դէմվրայ, կը նմանին վիշտու եւ Սիվա ստուած-ներուն որոնց մէկը կը շինէ, մէկալը կը քակէ: Գիտու-թիւնը մայր-բնութեան վրայ հակած կը սրբագրէ խորթ մօր աւերները: Ոչ մէկ քաղաքական դաւանանք, որքան ամրակուռ ու զօրաւոր երեւայ, երկար կեանք չէ ունեցած, որովհետեւ արեւստական եւ իմաստակ եղած է, որովհետեւ բռնանաւճ սկզբունքի մը կը հետեւի: Անոնք որոնք աշխարհի ճակատագիրը նախիրի պէս վարելու յաւակնութիւնը ու փառամոլութիւնը ունին, պէտք է ճանչնան մարդը իր անհատականութեան ու ընկերականութեան մէջ. պէտք է հետեւին անոր հո-ղեկան, գաղափարական շարժման, չէ թէ ետեւունը քեչնեն: Կլատուծն իրրեւ ընկերարան-քաղաքագէտ կը կրկնէր «քաղաքագէտ մը իր դարու մտաւոր շարժման հետեւելու է»: Պիսմարք չոր քաղաքագէտ մըն էր, որուն բոլոր յաջողութեան գաղտնիքը նենգութեան ու ֆի-զիքական ուժին մէջն էր, ընկերութիւնը չսերտեց, խարէութեան ճիւղը մշակեց միանակ եւ հոսանքին դէմ նաւարկեց. մարդկութիւնը քայքայող արեւն ճապարհ-ներու մէջէ... ու ընկզմեցաւ: Պիսմարք կը նկատենք զօրեղ մեքենայ մը որուն երկաթէն սուր ու սուլին շինեցաւ միջնակ, առանց բարոյականի թ ա վ ը տաւ-լու անոր: Իսկապէս երկաթի նախարարը մինչեւ վերջ սուրի ու հուրի քաղաքականութիւնը գործադրեց:

Անոնք Պիսմարքը իրրեւ քաղաքագէտ եւ իրրեւ մարդ: Առաջինին մէջ կասկածելի, երկրորդին մէջ ժըխ-տական պիտի գտնենք:

Պիսմարք ծնած է 1815 ապրիլ 1-ին. ճիշդ այն օրը ուր մարդիկ տարին մէկ անգամ գիրար կը խաբեն: Երկար ապրեցաւ, որքան մարդկային զգացմունքը պի-տի չի ներեր:

Դրանց համարը տպագրութիւն մը չէր ձգել Պիւմարք. ահարկու դէմք մը ունէր, կոտած կաշիով, որուն անձնուր ծածուկներուն մէջ Մէֆիստոֆէլի հեգնութիւն մը կար կծկտած. աչքի կապիճները երաշտ մնայած էին, արցունքը չէր ուռցած զանոնք եւ անկեղծ փըպիտը չէր անուշոցուցած այն կարծր նայածքը որուն դիմաց քարերն ալ կը ճաթոտէին: Օձ խաղչնողի մը արտայայտութիւնը ունէր որ . . . կը թովէր: Երեսը նայողին կարծես լռիկ մը կը հասկնէր դժոխքի դրան վրայի խօսքը. «Յոյսերով մի մտնենար ինձի»: Երկան բարտի հասակ մը, ոսկրուա եւ ըմբշային, որուն նեղ շուքին տակ կարելի չէր մակաղլը:

Արտաքինով գոնէ այդ հսկայի մէջ կ'ամբի մը ու ժը միայն աչքի կը զարնէ, յարատեւող եւ յամառ, որ սակայն անդթութեան հետ կը շփոթւի առանց բարոյական միջնորդութիւն:

Քաղաքականութեան մէջ դեռ նորընծայ, կը փայլի իբրեւ ծայրայեղ յետադիմական մը եւ ոխերիմ աղատականներուն: Միջին դարու խաւարամտութիւնով գիրցած, իրեն սկզբունք ընտրեց «նպատակը միջոցը կարգարայնէ»-ի վարդապետութիւնը: Նոյն իսկ այն պահուն երբ գլուխը այլեւս գերեզմանի անգունդէն կախ, հոպուն հետ կուտար կ'առնէր, նոյն քարոզը կուտար Գերմ. կայսեր: Պիւմարքի վարմունքին մէջ կը տեսնեն նաեւ չափազանց հայրենասիրութիւն մը որու կոճղին վրայ առանց վրդովմունքի բոլոր միւս ազգերը կը մտնէր: Բայց այդ հայրենասիրութիւնը սրբութենէ զուրկ էր. իտէալ մը չէր, այլ կիրք մը. ոխ մը. . . եւ կարծես այդ կիրքը չկշտացած հետը ճողը մտաւ, թէեւ այնքան խորտակուեմներ եղած էին անոր ստորոտը. . .

Գերմանիոյ անկերպարան եւ սարտամ վիճակը Պիւմարքը որոշ ուղղութեան մը մէջ դրաւ: Պէտք էր Գերմանական դաշնակցութիւնը ազատել աւստրիական գերիշխանութենէն, որ երկրին կորովը կը սպաննէր:

Եթէ աչքի առջեւ քերենք 30-40 տարի առաջւան քաղաքականութիւնը կը գտնենք զայն խակ, դեռ չնուած իր արեւստական ու գիտական կազմութեան մէջ: Ամէն բան կայսրիութեան անասան պահելու մէջն էր. ժողովուրդը դեռ անկեղու էր: Պիւմարք ճիշդ Եւրոպայի կեդրոնը, խորամանկ եւ խարդաւան քաղաքականութիւն մը կը սկսի, առանց խորութիւն գնելու միջոցներու գործադրման մէջ: Եւրոպական տէրութիւններուն հետ աչքիկապուկ խաղցաւ, հարկ եղած ատենը շոյց, վերջէն զարնելու պայմանով: Խարքով իր ուժը վերակազմեց իւր ուժով վեց տարւան մէջ երեք պետութիւններ գետինը խածցուց: Հռչակեց թէ «ուժը իրաւունքէն վեր է»: Սաստվայի ճակատամարտով Գերմ. դաշնակցութիւնը Աւստրիայէն զատեց եւ Բրուսիոյ թեւարկութեան տակ դրաւ: Պիւմարքի վարպետութիւնը կը կայանայ անոր մէջ որ երեք պատերազմներուն մէջ ալ, յաջողած էր օտար տէրութիւնները չէզոք պահել: Աւստրիոյ դէմ պատերազմած ատեն միամիտ հանդիսատեսի մը դերը տուաւ Ֆրանսայի. իսկ Աւստրիան՝ որ պահ մը առաջ իր թշնամին էր, Ֆրանսայի դեմ կուի ատեն, բարեկամացուց իրեն:

Սաստվան արդէն Պիւմարքի փառքը ու համբաւը շինած էր, իր հակառակորդներն իսկ ծունկի կուգային այդ ֆէդիչին առջեւ: Այդ յաղթութենէ ետքը, որպէս զի Գերմ. միութիւնը աւելի փութացնէ, («տիեզերական քուէարկութիւնը») հաստատեց:

Բայց Պիւմարքի մէջ մասնաւորապէս խորին ոխութիւն մը երեւան կուգայ Ֆրանսայի նկատմամբ. որուն ժառանգական թշնամին էր Erbfeind: Գիշերածաղկի պէս անոր սիրտը Ֆրանսայի դէմ ատկութիւնովը կը բացէր: Կ'ըսեն թէ իր կինը աշխարհի մէջ գերագոյն հաճաքը պիտի զգար եթէ ամբողջ Ֆրանսացիները սրէ անցնէին. Երբ Նաբոլէօն աչքիտուի քաղաքականութիւնով կը յորսնջէր. կամ աւելի ռամիկ բացատրութիւնով «աչքը չէր խաղար», Պիւմարք ինքզինքը կը պատրաստէր եւ պատերազմը անխուսափելի ընելու միջոցներուն վրայ կ'որոճար:

Ֆրանսա միամիտակ, ամէն դուռ գոց գտնելով իր առջեւ, չարաչար պարտութիւն կրեց զերման քաջամարզիկ բանակէն: Ամբողջ Եւրոպան կարծես վրէժ կը լուծէր Ֆրանսայէն որ ազատական գաղափարներով բռնակալութիւնները զրոգած էր: Առիթն էր:

Փարիզի պաշարման ատեն, Գերմ. նախարարապետը կը տեսնենք իբրեւ կոպիտ ուժ մը, աւելի վրէժինդիր մարմին մը քան հերոս մարտնչող մը: Իր ուխտն էր Ֆրանսայի սալ անանկ հարած մը որ յաւիտենական ըլլայ: Աստրեստանի կայսրի մը պէս Ֆրանսայի կողմէն սղմած 5 միլիոն տուգանք եւ Ալլաւ Լորէնը կը պահանջէր, որուն գրաւման դէմ գերման ազատական մարքեր հակառակեցան ապագայի մշտական վտանգ մը համարելով զայն:

Գերմանացիներուն պահանջը չափէ դուրս էր, աղաչանք պաղատանք օգուտ չըրաւ, Պիւմարք կը պահէր իր սիրտը — եթէ ունէր — ու բանալին ծովը նետած: Վայ յաղթողին: Փարիզը սովաւանջ կը մեռնէր, ժիւլ Ֆաւրը, երկաթէ նախարարին գութը կ'ուզէր հրաւիրել Փարիզի կիններուն ու երեխաներուն անօթիմեռ վիճակին վրայ: Պիւմարք ստորերկրայ ծիծարով մը կը հարցնէ. «Միթէ՞ դեռ չկերտք ձեր զուակները»:

Պատերազմին դաշտին վրայ գերմանական միութիւնը կուտար եւ վերջապէս պալատին մէջ վիճելովը զինւորական առօք-փառօք ամբողջ Գերմանիոյ կայսր պահւած էր: Պիւմարք փառքի դէսիթին վրայ էր, աւելի վեր բարձրանալու համար թեւեր միայն հարկաւոր էին, բայց անոր հոգին թեւ չունէր:

Ակնթարթի մէջ նոր պետութիւն մը աշխարհք եկած էր եւ եւրոպական հաւասարակշռութիւնը խանգարած: Եւրոպայի մէջքին վրայ Պիւմարք դերիշխան էր այլեւս հաւատարակութեան լծակը ձեռք առած էր, եւ կը գեղգեղէր («Գերմանիան Աստուծոյ զատ մարդէ չի վախնար»):

Խար տալու ժամանակը անցած էր, բայց Գերմանիան ալ միացած, ուժը, կորովը տեղը. լեռան պէս կուրծք կուտար ամէն վտանգի: Ռուսիոյ սիրտը մզմզալ առաւ, իր դրացին այնքան ամբութիւնը իր կողմ կը խոցէր: Մանաւանդ երբ արեւմուտքի հորիզոնին վրայէն պղնձէ սաղաւարտներուն փալիւիւնը վերջապէս շողերուն հետ Գրէմիլիի ցողակերտ գմբէթները կը անգունէին: Ռուսիոյ կշտին զինւորական մեծ պետութեան մը ստեղծումը Անգլիոյ բանին կուգար. երբ Ռուսիա սալասմակ արշաւէր դէպի Հնդկաստան, ստիպւած էր երբեմն երբեմն նսին նայել եւ քայլերը կամայցնել. բայց այդ հաշիւները նախատեսել չուին թէ Գերմանիա օր մը իր առեւտրական ահարկու մրցակիցը պիտի ըլլար եւ պիտի ջանար իր հայր խլել:

Գերմանիա առած դրամով խոխոյ վերակազմեց ինքզինքը. իսկ Ֆրանսա, որուն սղ կտորը ականջը ձգած կը կարծէր Պիւմարք, վերականգնեցաւ իր մոխրներուն մէջէն. դալիահար Ֆրանսայի երեսը քիչ ատենէն արիւն եկաւ: Պիւմարք այդ կենդանութեան առջեւ յուսալարութիւն մը զգաց. մտաբերեց երկրորդ եւ մահացու հարած մըն ալ տալ, եւ թէ իր զափնիները կանչցնել որոնք արդէն թոռմիլ առել էին: Բայց այդ դաւը չուտով ծայր տուաւ, Անգլիա եւ Ռուսիա սուղեցին երկաթէ նախարարին որ տեղը ծանր նստի. Գարը խոչոր էր:

Ռուս-թրքական պատերազմին, Պիւմարք Ռուսիոյ բարեացակամ չէզոքութեան փոխվարք մը ըրած ըլլալու համար, ձգեց զանի որ զգզէ թիւրքիան: Այդ ատենէն էր որ Ռուսիայի մէջ արտասանեց սա խօսքը թէ «Արեւելեան ինդիլը բամբակաբույս զինուորի մը ուկորը չ'արժէր»: Բայց Պէրլինի վեհաժողովին, որուն նախագահն էր, Ռուսիան նորէն խաբեց զրկելով իր յաղթութեան պտուղներէն. կապիկին արդարութիւնը գործ դրաւ. Կորչակօֆ շլինկորանք մեկնեցաւ վեհաժողովէն, վերջին անգամ մըն ալ Պիւմարքի ծուղակը իշխալով: Պէրլինի վեհաժողովը շատ չանցած իր անբարոյականութեան պտուղը պիտի տար եւ որուն զուրկ

գործողը պիտի ըլլար հայկական սարսափները:

Պիսմարքի խարխառու ու բարոյագուրկ քաղաքակա- նութիւնը կրրեակ նիզակակցութիւնը ծնաւ եւ որուն պիտուն վրայէն Ռուսիան իր դրօշակը միացուց Ֆրանսայի հանրապետութեան դրօշակին:

Ներքին քաղաքականութեան մէջ Պիսմարք բոլորովին վիժեց, բոլոր կուսակցութիւնները իր դէմ գտեցնելով: Ամէն բան կ'ուզէր զօրով բռնութիւնով գլուխ հանել: Ինչ որ չէր ձգէր կը կոտորէր, միահեծան էր երկրին մէջ: Եւ ձեռքը երկրին բերին խփած կը հրամայէր որ իրեն մինակ մտիկ ընէ: Վայ անոր որ դէմ կը դնէր. ոխակալ էր և պարտութեան մէջ «Տօշտու» կ'ընէր: Կաթօլիկութեան դէմ քաղաքակրթապայքարը (Kulturkampf) մղեց. կաթօլիկութիւնը հնազանդեցուց պետականութեան և հալածեց ճիզիթները: Բայց կաթօլիկ կուսակցութիւնը այդ զգետնուկէն աւելի ուժ առած էր, նախարարը արդէն գլուխը պատռած այդ ապառաժին զարնելով, ստիպեցաւ հաշտուիլ պապին ու կաթօլիկ կուսակցութեան հետ, սակայն թշնամութիւնը և պայքարը մինչև իր կեանքին վերջը տեսց:

Երկրին նախկին շլացքը, ատելութեան փոխած էր Պիսմարքի դէմ: Իզուր բացառիկ խիստ օրէնքներ հանեց: Պիսմարքի աստղը կը ցածնար, ինկող մարմնի արագութիւնով, ընկերվարական շարժումը բոլորովին անոր մէջքը կոտորեց: Պիսմարք ակուան կը կծրցնէր, «ընկերվարութիւնը արդի ընկերութեան երգեւալ թշնամին է» կը մտնէր: Իր հսկայական մարմնով չէր ցաւ թուժք կենալ այդ հեղեղին առջև որ կըսպառնար իր փառքին հետ ինքն ալ քշել տանիլ: Գործաւորական շլացնող օրէնսդրութիւնն ալ օգուտ չբերաւ: Ընկերվարական հոսանքը կը քայլէր ինչպէս Հոկտոբրի դարհոս ու ան նահանջ ալիքները: Պիսմարք հոգով մարմնով մինչև գերեզման մտաւ մալուխաց ընկերվարականութեան ետեւէն ու գեռ . . . կը մալուխայ: Այն մարդը որ կուռք մը պիտի ըլլար պահպանողական ու զինուորական Գերմանիային, կատարեալ Krach մը կրեց և աչքը բաց մեռաւ:

Գերմանիոյ հին կայսրը որքան ատեն ողջ էր Պիսմարք երկրին կամայապետն էր: Նոր կայսրը փրփրերախ, ցուցամուլ անհանգուրժ էր վեստ իշխանին քմահաճութիւններուն, ուստի երկրին սանձը խլեց ամէնի նախարարէն: Պիսմարք այլևս աշխարհի ծուռերը շտկողը չէր: Եւ մտռած իր դղեակը քաշեցաւ, տեսակ մը Այլուշ բերդ, ուրկէ սկսաւ կայսեր դէմ վրէժխնդր նետեր արձակել, վայրենիի պուճեքանկ սլաքներուն պէս որոնք նպատակին հասնելէն յետոյ ետ կը դառնային: Այդ շնորհազրկութիւնը ցնդեցուց Պիսմարքը, որ իր գաղտագողի քաղաքականութեան մասին աննպաստ յայտնութիւններ ընելով, երրեակ նիզակակցութեան քամակին վրայ պաղ ջուր լեցուց, «ծածուկը տուն կ'աւրէ» կ'ըսէ արդէն ժողովրդին իմաստութիւնը:

Ութ տարի վզրուկ նախարարը, ողջմեռ վիճակի մէջ իր սանձը կրծելով հալումաշ եղաւ, այն հսկան որ աշխարհ կը զողացնէր, մամուկկծիկ եղած նախապատմական մամուլի մը պէս հետաքրքրութեան առարկայ մըն էր այլևս: Կեանքին մէջ միակ ցաւ մը զգաց, երբ իր երկու գամբուրը իրմէ առաջ մեռան: Տխուր մեղամոգ ձուլութիւնով կը հաւտար թէ իր ետեւէն անոնք միայն պիտի ողբային: Սրտի խաղաղութիւնը չփչեց իր առանձնութեան վրայէն, և օր մը մահը եկաւ գերման դի-

ցաքանութեան «մեռելներու կողմնակցութիւնը շինած» նաւով և տապալեց խոշոր Իկտրաղիլը որուն արմատը, անգլութեան ու անխղճութեան հորին մէջ կը վերջանար:

\* \* \*

Ի՞նչ ըրաւ Պիսմարք և ինչ ձգեց իր երկրին ու մարդկութեան: Գերմանիոյ նիւթապաշտ ու խախուտ ուժ մը տաւ. նահատակեց հին Գերմանիոյ իտեալը, հապճեպ ու խուճապ շէնք մը թալաթոսեց, որուն արիւնով խցուած ձեղքերը ժամանակը հետզհետէ աւելի աչքիտես կ'ընէ: Վերջապէս խաղացք գետնի վրայ հիմնարկութիւն մը: Պիսմարք աչքերը աղօտած՝ բռնութիւնով ու խարդաւաններով իրերու բնական ընթացքը բռնաբարել ուզեց՝ թէ կարելի է ըսել տիեզերական բնագոյր արհամարհեց: «Գոյութեան կուրս» մէջ միակ միջոց սուրը ընտրեց, և հեգնեց մարդասիրական ամէն զգացում: Իր գործը զուրկ էր հեռանկարէ: Ժամանակը սակայն ընթացեց երկաթէ մարդուն սուրն ալ կուրսին ալ: Իր երկրին շնորհեց «երկաթէ ձեռներ» զարնելու համար միայն և . . . քնատ գիշերներ: Պիսմարք Գերմ. բռնահաճ ու հեիհե կապկպումի թերևս Հայնէի ստայնանկին գործած պատանքն ալ կցեց: Այսօր փտուն Գերմանիան կը տեսնէ թէ Պիսմարք ըրտ ուժի վերելք մը և վայրէջք մը ունեցած է լով:

Ընդհանուր աշխարհի ալ տաւ սպառնալէն խաղաղութիւն մը, որ այսօր ամբողջ մարդկութիւնը ահուսարսափի մէջ կը պահէ: Կրակը տաւ ու քաշեցաւ: Իսկ Արևելքի դժբախտ ժողովուրդներուն իբր մեղսաբաւութիւն Պէրլինի դաշնագրու թեան դաւաճան յօդաւճները կտակեց: Իսկ մինչև գերեզմանին շնորհ անխղճ եղաւ տանջող ազգերու համար: Տաճկական բարբարոսութիւններու ատեն, դաժան սրտով մը կը յայտարարէր թէ ուրիշները իրաւունք չունին սուլթանի գործերուն խառնելու: Պէրլինի ժողովը դաւադիրներու ժողով մը եղաւ: Պատուոյ երաշխաւորութիւնները ոճրագործութեան փոխեցան: Երբ հայերը անինայ կը կոտորէին, Պիսմարք կը ծիծաղէր մեր բախտին վրայ և կը կրկնէր հին երգը. «Ամբողջ Հայաստանը բռնաբանեցի ձեր զինուորի մը ոսկորը չ'արժէր»: Իսկ կրէտացիներուն մասին չ'խայնելով Պողոս առաքեալին խօսքը կը կատակաբանէր թէ «կրէտացիները ստախօս, չարաձճի և այլն են, ուստի պատժեցէք զանոնք»: Թէև նոյն առաքեալը կ'ըսէ «որէնքները բռնութիւն են»: Եթէ գերման հաստփոր ջոջերը որորմիս հանեն անոր փուտ հոգուն, կրէտացիք իրաւունք ունին ըսելու, շանգանկը գնաց աշխարհ թեթեւացաւ:

Այդ քաղաքակրթ վայրենին, արդարութեան ոչ քնարերգական սէրը ունեցաւ, ոչ ալ մարդկութեան օգուտ: Հայերը իրաւամբ անոր ճակատը խարկած էին արդէն փիս մ'արդ ընորոշ բառախաղով:

Փրէտերիստութիւն մենարանին դիմաց բոլոր մը կայ, որուն վրայ սրտառուջ արձանակոյտ մը կը ներկայացնէ դժբախտ ու արի եղնիկ մը զոր քանի մը շուներ կ'ուզեն փարատել, ինչպէս Հայաստանը: Այդ կատաղի կուրսութեան մտիկը պիտի փորեն Պիսմարքի հոգքը:

Հովերը յաւիտեան մարդկութեան անէճքը պիտի խօսին գերեզմանին վրայ այն մարդուն, որ երբեք խղճմտանք չունեցաւ:

### ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՎԵՐՁԻՆ ՊԱՅՈՒՆ

Int. Corresp.-ին Պոլսէն կը հեռագրեն մը, 7 օգ. «Երկու օրէ իվեր խիստ յուզիչ լրեր կը պտըտին, թէ կայսրութեան այլեայլ ծայրերը նորէն խռովութիւններ պայթած լինին: Ալբանիա՝ Էլբասան քաղաքի շրջակայքը 400 ալբանացիէ բաղկացած զինուած գունդ մը յարձակեր է օսմանեան զօրաբաժնի մը վրայ և ջարդուփշուր ըրեր է, այնպէս որ Էլբասանի մէջ ընդհանուր սարսափ կը տիրէ: Կը լսուի թէ Լիբանանի գրուզները մեծ ապստամբութիւն կը պատրաստեն, և թէ պարսից սահմաններու մօտ հայկական մեծամեծ խուճեր ընդհարումներով կ'արշաւեն երկրի խորքը (°):

Մէկգի դնելով նոր հայ արշաւանքի մը լուրին ըստուգութիւնը որ Խանասորի կուրի տարեգարձը (6 օգ. 97) միայն կարող էր ստեղծել սուլթանի սարսափած երեւակայութեան մէջ, — անցնինք Բալկանները, ուր կըրակը մարելու զուր փորձեր կ'ընէ Համիդ: Մակեդոնացիք ալ քնած չեն, թէև իրաւ է որ արթուն ալ չեն, այլ կէսքուն կը մրափեն: Իրենց վերջին համաժողովը, աւելի ճիշդ Մակ. Գերագոյն Կոմիտէի անդամներուն ժողովը, յիշատակագիր մը պատրաստած է, ներկայացնելու մեծ պետութիւններուն, որուն գլխաւոր կէտերն են.

1. Մակեդոնական մէկ նահանգ մը կազմել որ պիտի բաղկանայ Սալօնիկի, Վոնաստիրի և Իւսկիւրի երեք վիլայէթներէ, Սալօնիկն ունենալով իրրև նիստ (chef-lieu):
2. Երկրին մէջ տիրող կրօնքին ու ազգութեան պատկանող ընդհանուր նահանգապետ մը կարգել:
3. Ընտրել նահանգական ժողով մը որ քուէարկէ պիւտձէն:
4. Նահանգային միջիս ստեղծել և այլն:

Համաժողովը Կեդր. Կոմիտէին թողեր է այդ յիշատակագիրը ներկայացնելու պատիճ վարկեանը որոշել, նկատելով որ այս պահուս բուղար կառավարութիւնը բաւական գէշ տրամադրուած է Մակեդոնական հարցին համար: Խնդիր է սակայն թէ իրենք տանջող մակեդոնացիք և գործօն միւս կոմիտէները ինչպէս տրամադրուած են, և ինչ ընդունելութիւն պիտի ընեն սօփիացի դիւանագէտներու այդ թղթակուրի: Կրէտէի դործը շտկելու վրայ է: Անգլիա, Իտալիա, Ֆրանսա և Ռուսիա վերջնապէս արգիլած են Բ. Դուան նոր զօրք խրկել Կրէտէ, փոխարինելու համար հոն գտնուող բերդապահ գունդերը, որոնք արդէն լրացուցած են իրենց ծառայութեան ժամանակը: Չորս մեծ պետութիւնները արդեօք իրենք ալ խաղ մը կ'ուզեն խաղալ սուլթանի գլխուն, քաղաքավար կերպով պարպել տալով Կրէտէն, քանի որ այդ գունդերը վերջապէս յաւիտեան չեն կրնար Կրէտէ մնալ ու սպասել:

Մեծ Ծերունիին մահուան առթիւ մեր խրկած ցաւակցական հեռագրին իբր պատասխան, Կլատագօնի ընտանիքին կողմէն, Պէննի անպլ. դեսպանին միջոցով ստացանք հետեւեալ շնորհակալութեան նամակը, 22 յուն.

«Կլատագօնի ընտանիքը փոխադարձ թանկագին շնորհակալութիւնները կը յայտնէ իրենց ստացած ջերմասէս գնահատելի նամակրական հեռագրին նամար»:

### Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

#### ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՍՏԱԳԱԾ Է՝

Բօլզ-ի Օրէնագրացա քաղաքէն Յ. Վարդ 10 ֆր.: Լոնտօնէն Արարատ 2 շիւլին: Բարիզէն «Vers» 10 ֆրանք: Ռուս. Ս. քաղաքէն Մկրտ. Արզ. 20 ֆրանք:

#### ՏԱՊԱՐ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԷՆ՝

Յունիս ամսու մուտք. — Փամփուշտ 108 դրանկան, Կրակ 40 դր., Գահրիման 20 դր., Կայծակ 10 դր., Արծիւ 10 դր., Սուլիճ 2րժ. 35 դր., Զրվէժ 2րժ. 27 դր., Գեղճուկ 2րժ. 10 դր., Ծանծ 2րժ. 10 դրանկան:

Կղզեակ քաղաքէն ստացուած՝ Աշոտի միջոցով Փարոս 47 դրանկան, Ռուսը 20 դր., Մ. Մ. 20 դր., Գուրգէն 40 դր., Մեքնիսա-գործ 20 դր., Գործաւոր 10 դր. 8. Դ. 10 դր.:

#### ԲԵՐԴԻ ԿՈՄԻՏԷՆ՝

1 Յունւար-30 ապրիլ 98 — Օժանդակ խուճը 141 դրանկան 20 փարա, Ծանծ խ. 97 դր. 30 փր., Գնդակ խ. 38 դր. 20 փր., Իզմիր-լիան խ. 76 դր. 30 փր., Հայկաւանի Կայծակ խ. 149 դր., Մոնօր-սուանի ընթերցողներէն 14 դր., Համակողմներէ 10 դր., Նր 41-է 1020 դր., Գրիչ 317 դր., Կօմ 44 դր. 20 փր., Կլար 33 դր. 10 փր., Սուրէն 30 դր. 20 փր., Կամսար 28 դր. 20 փր., Խոսրով, Ասլան, Գեղամ, Զափ 19-ական դր., Մուշեղ 9 դր. 20 փր., Կարիճ 9 դրանկան 20 փարա: Գումար 2,093 դր. 10 փ.:

#### ՆԱԻԱՅԱՆԳԻՍՏԻ ԿՈՄԻՏԷՆ՝

Քրիստոստոր 25 ռուբլի, Վանօղ 25 ռ., Վեյ 20 ռ., Կայծակ 3 ռ., Որոտում 5 ռ., Սուլին 12 ռ. 50 կօպէկ, Կարօ 12 ռ. 50 կ., Կեակիմ 15 ռ., Իգնատիոս Յով. 50 ռ., Շէն Ալեքսան 50 ռ., Սարգիս 9. 5 ռ., Մազման, Վան, Վեյսան 10-ական ռ.: — Գումար 253 ռ.:

Ամսաբանոց քաղաքի «Մահ» խմբէն 25 ռուբլի Կարմիր քրք. Տէր Ա. 50 ռ.:

Գաղթավայրի մասնաճիւղէն՝ Լաստի գիւղէն Յարութիւն 8 ռուբլի, Աւետիս 1 ռ., Գասպարիկ 2 ռ. 50 կօպէկ, Յովսէփ 5 ռ., Գեղարիկ 2 ռ., Երուսղ 3 ռ.: Գեղարիկ գիւղէն՝ Վահրամ 4 ռ.: Վազգէն մասնաճիւղի ապրիլ, մայիս, յունիս եռամսեայ մուտքը՝ Աղաճավճարներ 24 ռուբլի, Նիքատուրիւն 15 ռ., Տայեցոց խ. 1 ռ. 5 կօպէկ — Համագումար 65 ռ. 55 կօպէկ:

#### ԱՂԵՔԱՆԳՐԻՈՅ ԿՈՄԻՏԷՆ՝

1897 ղեկ. — 1898 յունւար եւ փետրուար ամիսներուն մէջ: Արմատական խմբի ծնոցով հանգանակուած 120 դրանկան ողջ, Պասպա խ. 160 դր., Արմատական խ. 225 դր., Յ. Ազիզ 60 դր., Տիր-տէոս, Յ. Մ., Կիւզէկ, «Միութիւնը փրկութիւն» է, Տիկ. Շուշանիկ, Տիկ. Մայր Հայաստան, Եր. Ինքօ, Կենդանացու, Մեղու, Գօզան պէյ 30-ական դր., Արարատ խ. 26 դր., 10 փարա, Յ. Դազ 24 դր., չորս 20 դր., Ա. Շ., Իցայիթամաս, Բաշ Մ., Մորակ 15-ական դր., Ալ-շիշան, Այայտ, Վազր 10-ական դր., Տիտօն 5 դր., Արդարասէր խ. — գանձանակէն 125 ռ. կէս դր., Բուրզ խ. 120 ռ. կէս դր.: Համագումար 1,276 դրանկան 10 փարա:

#### ԳԱՅԻՐԵԻ ԿՈՄԻՏԷՆ՝

Յունւար, փետրուար, մարտ ամիսներուն. — Ստ. Յովհ. 1 անգլ. ոսկի, Գ. Բ. Ա. 40 դրանկան, Արամազդ 30 դր., Ապրիլ 15 20., Գեղամ 20 իւս 20 դր., Ներշապուր 10 իւս 10 իւս 10 դր., Փրանսացի 10 դր., Պերճ 10 իւս 10 դր., Սահակ Երկրագործ, Ար-վոթ, Հայկազ, Արարատ, Մասիս, Արւան 10-ական դր., Զարու-հի, Վրէժ, Հայկակ 5-ական դր., Երկաթ 5 իւս 5 իւս 5 դր., Մէ-կէն 5 դր., Աւետ. Կար. 5 դր., Պ. Պ. 10 դր., Օ. Օ. 10 դր., Արամազդ 10 դր.: Գումար 427 ռ. կէս դր.ողջ:

ՎրիՊԱԿ. — № 5 Նաւահանգիստի ցուցակ Գինիլիանիկ 200 ռ., պէտք է լինի Գեղճանիկ: Խոք. — իսն ցուցակ Մօլէկիւ 160 մ. պէտք է լինի 164 մ.: № 4-ի մէջ Բուէնօս-Այրէսի հանգա-նակութեան հաշիւը սխալմամբ նիւ-Եօրքի Կօմ.-ի անունով հը-րատարակուած է, փոխանակ նիւ-Եօրքի Յանձնախումբի:

Այլեայլ պատճառներով «Դրօշակ»-ի այս թիւը իր ժամանակէն ուշ լոյս կը տեսնէ:

Խմբագրութեան գիմէլ հետեւեալ հասցեով՝  
Rédaction du Droschak, Genève (Suisse)